

ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «Տնտեսագետի» 35–ամյա հոբելյանին

Հարգելի գործընկերներ, այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ նշելու մեր բուհի պաշտոնաթերթի՝ «Տնտեսագետ» ամսագրի հոբելյանը. այս տարի այն դարձավ 35 տարեկան:

Վստահ եմ, որ բուհին կապված յուրաքանչյուր անձ՝ ուսանող, դասախոս, թե աշխատակից, կարող է հաստատել, թե ինչ կարևոր նշանակություն ունի բուհական մամուլը համալսարանականներիս կյանքում, ինչպիսի բարձր առաքելություն է նրան վերապահված: Երեքուկես տասնամյակ ճանապարհ անցած մեր «Տնտեսագետը» ստեղծել է բուհական մամուլին առանձնահատուկ պատմություն, անցել է զարգացման տարբեր փուլեր՝ դառնալով Տնտեսագիտական համալսարանի պատմության վավերագիրը: Այսօր ևս, պահպանելով նախկինում եղած դրական ավանդույթները, ամսագիրը ներկայանում է նորովի՝ նոր տպագրական որակով, ձևավորմամբ, բովանդակային նոր շեշտադրումներով:

«Մենք փոխվում ենք» կարգախոս–ծրագրի համատեքստում արված որոշակի փոփոխություններն առնչվեցին նաև ամսագրին: Անցած տարի ստեղծվեց լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը, որի կազմում ընդգրկվեց ամսագիրը: Այսօր մի շարք գործառույթներ է իրականացնում այդ բաժինը՝ սպասարկելով բուհի պաշտոնական կայքը, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում բուհի պաշտոնական էջը, լույս է ընծայում ամսագիրը և կարգավորում մեր օրերում այդքան անհրաժեշտ հանրային կապերը, լրատվամիջոցների հետ աշխատանքը: Ընդ որում, այսօր այս բաժինը, ամսագրից բացի, ևս երեք ուղղությամբ աշխատանքներ է իրականացնում ամսագրի նախորդ անձնակազմի գրեթե նույն ռեսուրսներով: Պետք է ընդգծել նաև, որ

